ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«23» մարտի 2021թ. № 54-Ա

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՅԱՂԴԱՆ ԳՅՈՒՂԻ 06-079-0022-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Յաշա Նիկոլայի Դիմիտրիադիսի (ծնված՝ 12.03.1933 թվականին) կողմից լիազորված անձ(լիազորագիր տրված 23.06.2020թվականին) Ռուզաննա Յաշայի Մաթևոսյանի կողմից 23.03.2021թ. ներկայացված դիմումը, «Ա. Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշումով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Յաղդան գյուղի 06-079-0022-0001 ծածկագրում գտնվող 1062.5քմ բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքի 06-079-0022-0001 ծածկագրով հողամասի մակերեսը 1062.5 քմ

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 1062.5 քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված

հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Յաշա Նիկոլայի Դիմիտրիադիսին, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տների և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Յաղդան գյուղի 06-079-0022-0001 ծածկագրի տակ գտնվող 1062.5 քմ մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ բնակելի տան 41.06 քմ մակերեսով, 3.22 քմ մակերեսով բնակելի տան, 42.12 քմ մակերեսով բնակելի տան, 5.32 քմ մակերեսով բնակելի տան, 33.17 քմ մակերեսով բաց պատշգամբի, 20.8 քմ մակերեսով գոմի նկատմամբ՝ համաձայն հավելվածի ճանաչել Յաշա Նիկոլայի Դիմիտրիադիսի սեփականության իրավունքը:

4. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք Յաղդան գյուղի 06-79-0022-0001 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք գյուղ Յաղդան 4-րդ փողոց, թիվ 11 բնակելի տուն փոստային հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ

2021թ. մարտի 23

գ. Լոռի Բերդ